



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մայիսի 2011թ. թիվ 137-Ա

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 5-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2004 թվականի հունվարի 26-ի «Լոռու մարզի առողջապահության ոլորտի գլխավոր մասնագետների ցուցակը և գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 5-Ա որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

«Մհեր Մարգարյան – գլխավոր վիրաբույժ, Լ.Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ի տնօրեն» բառերը փոխարինել «Վլադիմիր Ղուկասյան - գլխավոր վիրաբույժ, Լ.Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ի վիրաբուժական բաժանմունքի վարիչ» բառերով:

ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՔՈՉԱՐՅԱՆ

2011թ. մայիսի 23
ք.Վանաձոր